*Ես տեսայ այնտեղից, լուսամուտից։ Կատարինէ՛, Կատարինէ, ո՛հ, (Անիմաստ վազվզում է դէս ու դէն։)*

Տիգրան. *(Ներս է գալիս ձախ կողմի դռներով մի գրիչ ձեռին։) Ի՞նչ պատահեց։*

Անահիտ. *(Գալիս է շտապով խորքի դռներով) Հայրի՛կ, հայրի՛կ, Նրանք գալիս են, ես հազիւ կարողացայ ներս մտնել։ (Ընկնում է հօր գիրկը։)*

Սենեքերիմ. *(Գրկում է Անահիտի գլուխը) Մի՛ վախենար, Նրանք գալիս են միայն մէկի համար։ Այդ ես վաղուց էի սպասում։*

Արտաշէս. *(Լուռ և անշարժ կանգնած է բեմի ձախ կողմում և նայում է դէպի խորքի դռները։)*

*Բեմի ետեւից լսւում է, ինչպէս մի ծանր բան, որ ընկնում է յատակի վրայ։*

Անահիտ. *Մայրիկը։ (Վազում է դէպի աջ կողմի երկրորդ դռները, բաց է անում դռները, նայում, սարսափում։) Մայրի՛կ... Ո՛հ, Նա սողում է յատակի վրայ։ Օգնեցէ՛ք։*

Ֆլօրա. *(Քարացած, անշարժ, բեմի աջ կողմից դիտում է Արտաշիսին։)*

Տիգրան. *(Վազում է դէպի աջ կողմի երկրորդ դռները և շէմքի վրայ Անահիտի օգնութեամբ յատակից բարձրացնում է անդամալոյծ Կատարինէին։)*

Բոլորը. *(Բեմի աջ կողմումն են, բացի Արտաշիսից և նայում են դէպի խորքի դռները։)*

Սենեքերիմ. *(Արտաշիսին) Փախի՛ր, Թշուառ, ի՞նչ ես քարացել...*

Արտաշէս. *Մայրի՛կ։ (Արագ մօտենում է մօրը, գրկում, համբուրում։ Յետոյ համբուրում է Անահիտի հետ և, դառնալով հօրը։) Մնաս բարով, հայրիկ, ես այլ ևս քեզ չեմ տանջիլ։ Ֆլօրա, ների՛ր ինձ, (Մի վայրկեան դառը Թախիծով նայելով Ֆլօրային, վազում է ձախ կողմի դռներով և դռները ետեւից փակում։)*

Պրիստավ. *(Երեւում է խորքի դռների մէջ։ Նրա ետեւից երեւում են ուրիշ ոստիկանների գլուխներ։) Արտաշէս Սահառունի։*

*(Բեմի ետեւից լսւում է ատրճանակի երկու զարկ։)*

Սենեքերիմ. *(Աղաղակելով) Ահա՛ կործանուածը՝*

Տիգրան. / Ֆլօրա. } *Վազում են դէպի ձախ կողմի դռները։*

Տիգրան. *(Կոտրում է դռները, ներս նայում և յետ կանգնում։) Նա լողում է արեան մէջ։*

Կատարինէ. *(Ճչում է) Ահ, անաստուածներ...*

Սենեքերիմ. *Նա ուրիշ ելք չունէր։ Վազում է Արտաշիսի սենեակը, տարօրինակ ճիչեր արձակելով։*

**ՎԱՐԱԳՈՅՐ**

**ՎԵՐՋ**

## ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

### ՀԱՌԱՋԱՆՔ

Բաղդն ըզՔեզ յինէ
Կորզեց, Ա՛դինէ.
Ուրպէս զի յաշխարհ
Վարեմ կեանս յաշխար :

Այլ երբ իմ նաւակս
Կրի յուսամաս,
Եւ վիշտք կենցաղոյս
Զիս ընկենեն անյոյս :

Անգէն ես ի քեզ
Խորհիմ, կո՛յսդ իմ նեզ
Եւ հոգւոյս մրրկայ
Ցրնդի ի քո փայլ :

Եւ երբ՝ բազմավէր,
Ըզքո յիշեմ սէր,
Իսկոյն մոռանամ
Ցաւերս համբերամ :

Թէեւ ինձ մօտ չես՝
Քեզ հետ կ'ապրիմ ես.
Կարծեմ՝ լուսախիտ
Տեսնել քո ժպիտ.

Լսել ձայնդ անուշ՝
Որ զրաւէ զիմ ուշ,
Զիւնարքոյ լանջաց
Տրոփիւնս սիրազգեաց.

Եւ ըսփոփաբեր
Գողտրիկ քո խօսքեր
Որ ի խորս ոգւոյս
Շողշողեն ըզյոյս :

Զի դու՝ մուսք հոգւոյս
Քաղցրութի՛ւն ես, լո՛յս.
Քե՛ւ իմ զրուցի սուգ,
Դադրին արտասուք :

Զի քո սէր անախտ՝
Իմ կեանքն է եւ բախտ.
Առանց սիրոյ քոյ՝
Մեռանի՛մ անգոյ :

## ԻՄ ԻՏԷԱԼԸ

Իմ իտէալն է մի կոյս՝
Որ դիցուհին է հոգւոյս.

digitised by A.R.A.R.@

Սրտիս տրոփիւնք ամենայն
Նորմա՛ խընկեալ են միայն (¹) :

Ի նա խոռնիմ հանապազ ,
Զնա՛ կը տեսնեմ ես յերազ ·
Ի տուընջեան եւ գիշեր՝
Նա՛ միշտ աչացս է պատկեր :

Չէ նա ծընած մեծատուն .
Պարզութեամբն ա՛յնքան սիրուն՝
Որ ոսկեհուռ հանդերձ՝ կին
Կը մըթագնի մերձ Նորմին :

Նորա զարդն է բովանդակ
Կուսափայլ քօղն լապիտակ .
Զունի նա կեղծ եւ ոչ ինչ ,
Համայնն՝ սրտին պէս է ջինջ :

Շողալ սիրէ ոչ բընաւ
Ընկերութեանց պերճ ի խաւ .
Ու կը ընկնի ամօթխած
Յիւր հրապոյրներ սիրազգած :

Սեւակայծ աչք իւր ունին
Փայլ այնպիսի երկնային՝
Որ նորա սուրբ ակնարկէն
Շիկնին պաշտօղք իւր ամէն :

Անբըծութեամբն է շուշան ,
Գեղովն ա՛յնքան հրաշագան ,
Որ յաշխարհ չըք ինչ բընաւ
Նորա նմանոյն սրտագրաւ :

Քան ըզգրնար ձայնն անուշ ,
Այս քան ըզվարդն է քընքուշ .
Քան ըզտատրակ հեզագոյն ,
Քաղցըր քան զելս է այգոյն :

Նորա նակշին պէս նըշոյլ
Զունին լուսին , աստեղց բոյլ .
Ոչ մի ծաղիկ գեղաբոյր
Զանձին նորա չունի բոյր :

Զի զամենայն՝ զոր կանայք
Ունին ձիրքեր եւ հըմայք ,
Բովանդակէ յիւր ոգին
Իբր ի փունջ՝ իմ պաշտելին :

Շարժում իւր , բանք եւ բնութիւն՝
Փայլին լոկ զա՛նմեղութիւն .
Եւ ով տեսաւ զայն՝ կ՛ըսէ ·
Արդեօք հրաշքն հրեշտա՞կն է :

Հրեշտակ թէ կոյս հրաշաղէմ,
Ես այլ յերկրայս՝ զա՛յս գիտեմ
Որ յիւր փափկիկ մի նայուած
Կեանք ըզգացի բոցազգած (*) :

Չը գիտեմ թէ ո՞վ է նէ .
Գիտեմ որ իմ անուրջն է ։
Համայն իւր անձ՝ դաշնակ , լոյս ,
Բոյր , քաղցրութիւն է , սէր , յոյս :

Եւ ըզմայլեալ իմ հոգին
Յա՛յտնան հրապոյրս երկնային ,
Գոչեմ . « Իմ կոյս Ադինէ
Երկնի քնքուշ ժըպիտն է » :

---

# ԵՒԱ

Երբ Արարիչ վերջ տուաւ
Արարածոցն ըստեղծման ,
Յիւր զահոյից նայեցաւ
Յէից ըրքեղ տեսարան :

Արփին շողայր վեհափառ ,
Կեանս սփռելով ի բնութեան .
Լուսին , աստեղք վառ ի վառ
Տային ըսփոփ գիշերուան :

Դիտեց լեռներն ամպահերձ ,
Զանեղամռունչք ովկէան ,
Պըսպըղուն փայլ ջինջ աղբերց
Զեփիւռն ի սիւք յամառան :

Մարգագետինք եւ ծըմակք
Կանաչազարդ փայլէին ,
Եւ դաստապետըն սոխակ
Թըռչնոց հետ երգ մըրնչէին :

Մռնչէր առիւծ սիրաբար ,
Խրխնջէր ձին բաշապանձ ,
Գառնիկ մայէր հեզաբար
Յանասնոց ջոկ սիրախանձ :

Ի բուրաստան բոյր ի բոյր ,
Շուշան , յակինթ , յասմիկ , վարդ ,
Տարածէին քաղցրիկ բոյր ,
Շողշողելով ցօղազարդ :

« Այս ամենայն բարի է ,
Ըսաւ Հաստիչըն բնութեան .
Այլ ոչ մին դեռ պատկերէ
Զիմ մըտաշիպ գեղութեան » :

Խոնարհեցոյց զաչս յայնժամ
Ի դրախտն Եդեմ . եւ տեսաւ
Զի ննջէր մէջ անդ Ադամ ,
Միայնութեան կրելով ցաւ ·

---

* Վարիանտ. [illegible]

* Վարիանտ. Որ յիւր [illegible] մի հայելւոյ — Կեանք [illegible]

digitised by A.R.A.R.@

Մազերն ի յուս զանգրաւէս,
Բոցավառ աչք սեւորակ,
Բարձր էր ճակատ լայնաւէս,
Բազուկք կարենեղ, յաղթ հասակ:

« Սա կենդանեաց՝ արժանի,
Նաւ, լինել զահակալ.
Չի է բնութեամբ կորովի,
Հոգւոյ ծրիւք պերճացեալ (*):

« Այլ թէ է սա զօրութեան
Եւ հանճարոյ ներկայիչ,
Այլ չէ եւ սա փափկութեան
Տեսլեան մըտացս յանկուցիչ:

« Ստեղծագործեմ վերստին,
Տալ իմ մըտաց մարմնացում.
Եւ այն լինի լիովին
Գեղոյ, շնորհաց լրացում »:

Եւ վայր իջեալ ի դրախտ Նայ
Արարչագործ իւր ձեռքով,
Առաւ սրտէն Ադամայ,
Շինեաց մարմին յաւաքեալ:

Եւ ի սիրոյ աղբիւրէն
Փըչեալ սրտին ի վարդեր,
Բորբոքեց զայն բոցեղէն
Եւ եղաւ կին համակ սէր:

Գեղեցկութիւն եւ շնորհ
Ճառագայթեն երկնագոյն.
Գորով, նազանք սրտախորհ
Է էութիւն իւր ողջոյն:

Դեղձան հուզոյք ցօսն համբոյր,
Եւ պարանոց մարգարտեայ,
Այտեր եւ լանջ կաթնաթոյր,
Անդամք փափկիկ բիւրեղեայ:

Թէ՛ հոլանի՝ թէ՛ ի քող
Վարսից՝ ա՛յնքան սրփին է փայլ,
Զի չէ յէից ոք յաղթող
Իւր հրապուրից հոգեզմայլ:

Երբ գնայ ի բեմ ոտն ի թիկն,
Ի ստուերս հովտացն Եդեմին,
Ծաղկունք ըզնա սիրեն ի խինդ
Թագուհի խոստովանին:

Յարարածոց ամէն ոք.
Մնան եւ նրմա գեղազանց.
Արփին ի սիրս հուր բորբոք,
Ծաղկունք, զոհարք՝ բոյր, երանգ:

Շնորհաց, գեղոյ ամփոփում,
Գիրգ հոգի՝ զօդեր ի մարմին,
Զմայլմանց, հեշտութեանց զեղում,
Կատարելութիւն վերջին:

Այս է ահա կոյսն Եւա,
Հաստչին յետին ձեռաց տիպ,
Եւ զմայլեցաւ Էն ի նա,
Իբր յիսկական մըտատիպ:

« Գեղեցկութի՛ւն, կուտամ քեզ
Անդիմադարձ շնորհ հրապոյր,
Վառէ՛ ի սէր բոցակէզ,
Մարդոյն ըզսիրտ անհամբոյր:

Եւ ժպտելով Տէր՝ զբուարթ,
Յաւել՝ « Սա այժմ արդարեւ
Է փունջ շնորհաց քան ըզվարդ,
Սա տացէ կեանս քան զարեւ:

« Սա թող լիցի մարդոյն միշտ
Սրտին տարփանք, հոգւոյն յոյզ,
Ուրախութիւն իւր եւ վիշտ,
Կեանքն իւր եւ մահ, լոյսն եւ յոյս:»

ԽՈՐԷՆ Ա. ՆԱՐՊԷՅ

## ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ

Արեւակէզ ճամբաներէն երգ մը տխուր կ'երկարի
Ու կը մեռնի գաղջութեան մէջ արեւելեան երկինքին.
Կարաւանին վրայ կ'իյնայ լուսնի շառայլ մ'հեշտագին
Ծըծելով շունչը քրտինքին ճամբորդներուն յոգնատանջ:

Անոնք հազիւ տեսան աղբիւրն ովասիսին զովաշատ
Որուն ջուրերն հրաշապատում հեքեաթն իրենց պատմեցին,
Ուր այն գիշեր պահ մը շողաց երկնակամարն աստղածին
Խոստումներով՝ շուքին, սէրին տարաշխարհիկ նոճերուն:

Ու ցաւալի՜ք, կորաքամակ կ'երթան անոնք անտրտունջ
Դէպ ի բոյրերն ասորական անանուխին հեշտաւէտ
Որ տարփօրէն պիտի զըգուէ երազն իրենց ժէլլահի:

Կը մըտածե՛ն, կը մըտածե՛ն պերճ նըժոյգներն յաղթաշուն;
Անապատին մահահամբոյր հովերուն մէջ առ յաւէտ,
Ետոյ սըրտո՛ւմ կ'երգեն անունը Ջէննէթին, Ալլահին...

ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ

*) Վարիանտ. — Հոգւոյ յերկ ճառագայթեալ.

digitised by A.R.A.R.@